մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև պետական տուրքի գումարը, որը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով: Նման հաշվարկի հիման վրա է որոշվում օրենքով սահմանված և պարտադիր վճարման ենթակա պետական տուրքի չափը:

Նկատի ունենալով, որ սույն քաղաքացիական գործով հայցվորները նախապես վճարել են պետական տուրքի գումարը, իսկ հայցն ենթակա է մերժման, գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Անդրադառնալով կիրառված հայցի ապահովման միջոցի հարցին՝ Դատարանը գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վճիռ կայացնելիս լուծում է հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցն ենթակա է մերժման, գալիս է այն եզրահանգման, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 09.04.2026 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո պետք է այն վերացնել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Աութսորս» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀ ԿԳՄՍՆ-ի կարիքների համար ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունների (սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում) ձեռքբերման նպատակով 2026 թվականի «փետրվարի» «23» «1» որոշմամբ հայտարարված թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ կայացված «ԱՈՒԹՍՈՐՍ» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 09.04.2026 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ

մտնելը, վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո այն վերացնել:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Ճիլաջյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE82-8920-4188-AEC2 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am